

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY
OF AMERICA

156 Fifth Avenue, New York, N. Y.

Room 1006-1008

2

Telephone: CHelsea 3-1791

ՊԱՃՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Աղգային Կեդր. Վարչութիւնս պարտք կը զգայ վերջին անգամ դումարուած Երեսփոխանական Ժողովի շուրջ կատարուած իրադարձութեանց եւ Ժողովի որոշմանց ամփոփումը հաղորդել հասարակութեան: Բարձրաշնորհ Տ. Ղեւոնդ Սրբազան Արքեպիսկոպոսի հրաւիրանօք Աղգային Երեսփոխանական Ժողովը Սեպտ. 2-ին իր օրինական առաջին նիստը գումարեց Նիւ Եորքի 27րդ Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ:

Առաջնորդ Սրբազանի հիւանդութեան պատճառաւ իր կողմէ փոխանորդաբար նախագահելու հրաւիրուած էր Տ. Յովսէփ Եպս. Կարապետեան:

Նիստի բացման Կեդր. Վարչութեան դիւանը առժամաբար վարեց դիւանական գործողութիւնները եւ քուէից առաւելութեամբ ընտրուեցաւ Քննիչ Յանձնախումբ մը նորընտիր Երեսփոխաններու ընտրական տեղեկագիրները քննելու եւ ընտրութեանց օրինաւորութիւնը հաստատելու համար:

Ունկնդիրներու անօրինակ բաղմութիւն մը գրաւած էր սրահը, Շիքալոյի ցուցահանդէսի եռագոյն դրօշի շուրջ պատահած միջադէպի առթիւ, ամիսներէ ի վեր մղուած լրագրական թեր ու դէմ բուռն պայքարը Երեսփոխանական Ժողովի: շուրջ յառաջ բերած էր բացարձակ հետաքրքրութիւն եւ որոշապէս տեսանելի էր այդ բաղմութեան մէջ փոխադարձ ատելալիտ զգացում:

Ժողովի դիւանական պարզ խնդրոյ շուրջ եղած վիճարանութեանց ընթացքին ունկնդիրներու կողմէ եղած անհարկի միջամտութիւններ, համակրանքի կամ դժգոհութեան արտայայտութիւններ, պէտք զգացուցին հաւանական անախորժ դէպքերու առաջըր առնելու եւ երեսփոխաններու խօսելու ազատութիւնը ապահովելու համար, ինչպէս օրէն է նմանօրինակ պարագաներու մէջ, առաջարկուեցաւ յաջորդ նիստը գումարել 27րդ Եկեղեցւոյ Տաճարին մէջ եւ դռնփակ:

Այս առաջարկը Ժողովի երկու ընդդիմադիր կողմերու իսկ հաւանութեամբ որոշուեցաւ եւ թարկել նախագահի հաճութեան եւ Տ. Յովսէփ Եպիսկոպոսի պաշտօնէ յայտարարեց. «Նկատելով Ժողովի բացառիկ հանգամանքը կ'որոշեմ յաջորդ նիստը գումարել դռնփակ»:

Այս որոշումէն վերջ նիստը փակուեցաւ: Հակառակ յաջորդ նիստը դռնփակ կատարելու բացորոշ պայմանին, Երեսփոխանական Ժողովի ծանօթ փոքրամասնութիւնը միացած 27րդ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան հետ, անկատար թողուց այդ որոշումն ալ, եւ ոչ միայն մերժեց Եկեղեցւոյ Տաճարը տրամադրել իբր Ժողովատեղի ալ եւ նախորդ Նիստի Սրահը թոյլատրեց որ գրաւուի Ժողովրդային անօրինակ բաղմութեամբ, պարզապէս Երեսփոխանական Ժողովը կատարուած իրողութեան առջեւ դնելու համար:

Այս ակնյայտի ապօրինութեան առջեւ երեսուէն աւելի երեսփոխաններ գրաւորապէս դիմեցին Առաջնորդ Սրբազանի, պահանջելով որ Ժողովի դռնփակ դումարման որոշումը յարգուի, որպէսզի Ժողովը ազատ ճնշումներէ կարենայ անարգել կատարել իր օրինական աշխատանքը: Ժողովատեղիի փոփոխութիւնն ալ անհրաժեշտ դարձած էր, խնդրարկու երեսփոխաններու պահանջն էր նիստը շարունակել Հօթէլ Մարդինիքի ընդարձակ Սրահին մէջ: Առաջնորդ Սրբազանը համամիտ դռնփակելով եղած բանաւոր առաջարկին, իր մօտ հրաւիրեց իր կողմէ նախագահ կարգուած Յովսէփ Սրբազանը եւ ի պաշտօնէ յանձնարարեց 27րդ Եկեղեցին գտնուող Երեսփոխաններու հաղորդել թէ Ժողովը պիտի գումարուի Հօթէլ Մարդինիքի մէջ, ուր պարտին ներկայ գտնուիլ բոլոր երեսփոխաններն ալ:

Տ. Յովսէփ Սրբազան իրեն եղած յանձնարարութիւնը աններելի դանցառութեամբ ի պաշտօնէ չէ հաղորդած ներկայ եղող սակաւաթիւ երեսփոխաններուն:

Տ. Յովսէփ Սրբազան Առաջնորդի ուղղեալ իր չքմեղադրի մէջ այդ մեղանշումը կը վերագրէ «կացութեան լրջութեան պատճառաւ»: Բայց բացայայտ է որ 27րդ Եկեղեցին գտնուած Երեսփոխանները դիտակ էին Ժողովատեղիի փոփոխման: Աղգային Վարչութեան անգամ ընդդիմադիր երեսփոխան մը հեռախօսով հաղորդակցութեան մէջ էր Մարդինիք Հօթէլ գումարուած Ժողովի Ատենապետ Պր. Մաղաք Պէրպէրեանի հետ եւ իրեն հաղորդուեցաւ թէ Ժողովի բացումը յապաղած էր ցարպապէս իրենց գալուն սպասելով: Բայց ակնարկեալ ընդդիմադիր Երեսփոխանը հոն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, գտնուող Երեսփոխաններու կողմէ վճռապէս յայտարարեց թէ իրենք որոշած են Ժողով գումարել միայն 27րդ Եկեղեցւոյ Սրահին մէջ եւ դռնբաց:

Այս պատասխանը ստանալէ վերջ էր որ Առաջնորդ Սրբազանի հաւանութեամբ Մարդինիք Հօթէլի մէջ գումարուած Երեսփոխանական Ժողովի նիստը բացուեցաւ ժամը 7-30-ին ի ներկայութեան 57 երեսփոխաններու:

Առաջնորդ Սրբազանի յանձնարարութեամբ Տ. Մամբրէ Մ. Վրդ. Գալֆեան նախագահեց նիստին: Մայր դիւանի անգամ ընտրուեցան — Տիար Մաղաք Պէրպէրեան՝ Ա. Ատենապետ, Տիար Լեւոն Պապեան՝

Բ. Ատենապետ, Տիար Պետրոս Պոնտացի՝ Ա. Ատենադպիր, եւ Տիար Սիսակ Նալպանդեան՝ Բ. Ատենադպիր: Տիար Ատենապետը յայտարարեց թէ 27րդ Եկեղեցիի հաւաքուած երեսփոխանները այս ժողովին մասնակցելու համար իր ըրած ջանքերը ապարդիւն դարձան: Քանի որ հոս հաւաքուած երեսփոխանները օրինական մեծամասնութիւն կը կազմեն, կարելի է ընթացք տալ ժողովի աշխատութեանց:

Նորընտիր երեսփոխաններու ընտրական տեղեկագիրները Քննող Յանձնախմբի տեղեկաբերը յայտարարեց որ բացի մէկ քանի գաղութներէ, շատ վայրերու մէջ կատարուած ընտրութեանց առթիւ բողոքներ ներկայացուած են: Բայց վերջին ամիսներու մէջ Կեդր. Վարչութեան անդամոց մէջ տիրող պառակտումի եւ կազմալուծման հետեւանքով բողոքներու առթիւ տեղական քննութիւն չէ կատարուած եւ Նախագահ Սրբազանը լիազօրուած է Վարչութեան վեց անդամներու կողմէ ստորագրուած դրով մը ընտրական դործողութիւնները վարելու:

Ժողովը նկատելով որ հնարաւորութիւն չկայ նոր քննութիւն կատարելու, որոշեց ընդունիլ Առաջնորդ Սրբազանի կողմէ կատարուած քննութեան արդիւնքը, հրաւիրեց նորընտիր անդամները գրաւելու իրենց Երեսփոխանական աթոռը որոնք Առաջնորդ Սրբազանի կողմէ հրաւէր ստացած են ժողովի մասնակցութեան:

Երեսփոխանական Ժողովի նախագահ Տ. Մամբրէ Ծ. Վրդ. կարգաց Առաջնորդ Սրբազանի տեղեկագիրը: Ժողովը իր ջերմ գնահատութիւնը յայտնեց ծափերով եւ շնորհակալութեան ջուէներով:

Կարգացուեցաւ Կեդր. Վարչութեան Տեղեկագիրը ստորագրուած վեց անդամներու կողմէ: Ժողովը ապա տեղեկանալով որ Վարչական նիստերը ստացեր են Կուսակցական բնոյթ եւ անցեր են ապարդիւն, եւ նկատելով որ արդէն իսկ կազմալուծուած է Վարչութիւն ոմանց հեռացմամբ եւ ոմանց հրաժարմամբ որոշեց օրակարգ անցնել Վարչութեան ամբողջական ընտրութիւնը:

Ժողովը անդրադառնալով Եիքակոյի համադգային ցուցահանդէսի մէջ եռագոյն դրօշի շուրջ պատահած միջադէպին, նկատեց որ զուտ հայկական արուեստ, մշակոյթ ցուցադրելու համար կազմուած հանդէսի մը մէջ մէկ քանի կուսակցականներ դրօշի խնդիր յարուցանելով քաղաքական բնոյթ ընծայած են եւ առիթ տուած վարկաբեկելու ցեղը, նկատելով նաեւ որ նոյն ցուցահանդէսին մէջ Գերմանիոյ նման ազգի մը ներկայացուցիչները նմանօրինակ վէճի առթիւ բաւականացած են միայն Ամերիկեան դրօշով ներկայանալ, ինչ որ ամենէն իմաստուն կարգադրութիւնն էր, համամիտ գտնուեցաւ Առաջնորդ Սրբազանի խոհական ուղղութեան եւ յայտնեց իր վստահութիւնը:

Ժողովը տասը վայրկեան դադարէ վերջ ընտրեց Կեդր. Վարչութիւնը հետեւեալ անձերէ. —

- | | |
|---------------------------------------|--------------------------------------|
| Տ. ՄԱՄԲՐԷ Ծ. ՎՐԴ. ԳԱԼՖԱԵԱՆ | ՏԻԱՐ ՄԿՐՏԻՉ ՆԱՃԱՐԵԱՆ |
| Տ. ՄԱՏԹԷՈՍ Ա. ՔԶՆՅ. ՀԵՔԻՄԵԱՆ | ՏԻԱՐ ՏԻԳՐԱՆ ՍՄՍԱՐԵԱՆ |
| Տ. ԵՂԻՇԷ ՔԶՆՅ. ԳԱԼՉԸՆՃԵԱՆ | ՏԻԱՐ ՊԵՏՐՈՍ ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ |
| Տ. ԱՐՄԷՆ ՔԶՆՅ. ԹՈՐՈՍԵԱՆ | ՏԻԱՐ ՎԱՐԴԱՆ ՏԻՐԱՏ |
| Տ. ՅԱՐ. Ա. ՔԶՆՅ. ԹՈՒՄԱՆԱՆ (փոխ անդամ) | ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ (փոխ անդամ) |
| ՏԻԱՐ ԼԵՒՈՆ ՊԱՊԱՆԵԱՆ | ՏԻԱՐ ՆՇԱՆ ԷԺՏԱՀԱՐԵԱՆ (փոխ անդամ) |

Ժողովը փակուեցաւ կէս գիշերին:

Ներկայ հակիրճ շրջաբերականով Աղգային Կեդր. Վարչութիւնս Երեսփոխանական Ժողովի ճշգրիտ ամփոփումը տալէ վերջ, պարտ կը դգայ յայտարարել թէ այս յուզումնալից շրջանի մէջ ստանձնած է Վարչական ծանր պատասխանատու գործ մը պարզապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգ ու սարքի պահպանման եւ աննպատակ ստեղծուած ներքին ցաւալի պայքարի ընթացքին արդիւնքը համար դաղութահայ կեանքի եւ գործունէութեան կազմալուծումը:

Ողջամիտ Հայ հասարակութեան բոլորովին բացորոշ ըլլալու համար վերջին օրերու իրար հակասող իրադարձութիւնները, ստիպուած ենք յայտնելու փոքրամասնութեան 27րդ Եկեղեցւոյ մէջ Սեպտ. 3, Կիրակի օրուան գումարած ժողովը զուրկ է օրինականութենէ եւ Առաջնորդ Սրբազանը պաշտօնանկ ընելու որոշումն ալ բացարձակ հակասահմանադրական եւ բոլորովին ապօրինի:

Ամերիկահայ Սահմանադրութեան 24րդ Յօդուածով «Թեմակալ Առաջնորդը կ'ընտրուի Երեսփոխանական Ժողովէն չորս տարուան պայմանաժամով եւ կը հաստատուի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ»:

Նոյն ժ. համարով «Առաջնորդի դէմ եղած բողոքները ի հարկին իր եզրակացութեամբ կը ներկայացուին Ամենայն Հայոց Հայրապետին»:


Աղգային Սահմանադրութեան մէջ Երեսփոխանական Ժողովը ոչ մէկ իրաւասութիւն ունի պայմանեալ ժամանակէն առաջ առանց Վեհ. Հայրապետի հաճութեան եւ որոշման Առաջնորդ մը հրաժարեցնելու:

Վեհափառ Հայրապետը հեռադրով իր օրհնութիւնները եւ վստահութիւնը յայտնած է Առաջնորդ Սրբազանի եւ Երեսփոխանական Ժողովի, իր բարձր գնահատութիւնը յայտնելով Առաջնորդի եւ Ժողովականներու կողմէ ցոյց տրուած ուղիղ վերաբերումին համար:

Աղգ. Կեդր. Վարչութիւնս ի շահ Հայաստանեայց Եկեղեցւոյ կոչ կ'ուղղէ Գեր. եւ Արժ. Հովիւներու եւ Պատ. Հոգաբարձութեանց եւ բարեպաշտ ժողովրդեան պատկառ. կալ օրինաց եւ Վեհափառ Հայրապետի հրամանաց եւ ըստ առաջնոյն շարունակել յարգալիք յարաբերութիւն Առաջնորդի եւ Առաջնորդարանի հանդէպ:

Հայ Ժողովուրդը շատ անգամներ տեսած է նպատակաւոր կերպով յարուցուած ներքին վրդովումներ, բայց կրցած է հաստատ եւ անյողողը կամ ջով ծառանալ Եկեղեցին հատուածական հաշիւներու ծառայեցնող խմբակներու դէմ:

Աղգ. Կեդր. Վարչութիւնս վստահ ժողովրդային համակրութեան եւ գործակցութեան կը ստանձնէ այս յուզումնալից շրջանին մէջ իրեն վստահուած ծանր եւ պատասխանատու պաշտօնը:



Ի դիմաց ԱՁԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Ամենապաշտ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՍԱՐԳՅԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅՆԱԿԱՆ ԺՊՈՎ
ՄԱՄԲՐԷ Ծ. ՎՐԴ. ԳԱԼՖԱԵԱՆ
(Կ Ո Ւ Բ)